թողեկոսական կոնդակները, որոնք ցոյց են տալիս թէ Մազանդարանում Հայերի բազմութիւն է եղել։ Մովսէս եպիսկոպոս իր մի կոնդակի մէջ [1] գրում է.

"Ընդհ.ք առաքելական եւ նամակ պահպանողական ի վերայ մերազուն եւ Հայկաստանեայ համայնից ժողովրդականաց, որք էք ի Քաշան, ի Ղազվին, ի Գիլան, յԱնզալի, ի Դարբանդ եւ որք շուրջ զդոքօք մեծամեծ եւ մանրամասնեայ գիւղօրայք իցեն . . .»։

Սրանից հետեւում է, որ մինչեւ անցեալ դարի գոնէ առաջին քառորդը Գիլանում Հայերի բազմութիւն կար, ուրեմն Շարդէնի ասածը, թէ իր ճանապարհորդութեան ժամանակ 1632ին 400 տուն հայ էր մնացել Մազանդարանում, հաւանական չէ, քանի որ գրէթէ 100 տարուց յետոյ "մեծամեծ եւ մանրամասն գիւղօրայքի" խօսք է լինում։

Բայց կայ եւ մի ուրիշ հանգամանք, որ ոյժ է տալիս Շարդէնի խօսքին։ Ինչպէս յայտնի է, Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը մեծ ջանքեր գործ դրեց գրաւել այսրկասպեան երկիրները— Բագուն, Մազանդարանը, Գիլանը, Դարբանդը։ 1723 թ. սեպտ. 12ին Պարսից Թահմաս Բ. Շահի հետ կնքած դաշնագրի զօրութեամբ Մեծն Պետրոսը հասաւ իր նպատակին եւ այնուհետեւ, ինչպէս վկայում է Սօլօվիեվ պատմագիրը, նա ամէն կերպ ստիպում էր, որ Հայերին

---

1 Մովսէս եպիսկոպոս Նոր-Ջուղայի վեցերորդ առաջնորդը՝ 1706—1725 թ.։